

“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը ճառագայթումային անվտանգության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հայկական ԱԷԿ-ը արդյունաբերական օբյեկտ է, որտեղ էլեկտրաէներգիայի արտադրման համար օգտագործվում է միջուկային վառելիք և պրակտիկ գործունեության մեջ կիրառվում են իոնացնող ճառագայթման աղբյուրներ:

Հաշվի առնելով այն, որ անձնակազմի և բնակչության ճառագայթումային պաշտպանությունը հանդիսանում է ՀԱԷԿ-ի շահագործման ընթացքում անվտանգության կառավարման համակարգի հիմնական բաղադրիչներից մեկը, և պատասխանատվություն կրելով անձնակազմի և բնակչության առողջության, կյանքի և ունեցվածքի պաշտպանության, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության պայմաններ ստեղծելու համար՝ “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի ղեկավարությունը հայտարարում է.

ճառագայթումային անվտանգության բնագավառում հիմնական նպատակը կայանում է հետևյալում՝ ապահովել, որպեսզի նորմալ շահագործման պայմաններում ռադիացիոն ճառագայթումը ՀԱԷԿ-ում և արտանետումները հրապարակից դուրս միշտ լինեն հաստատված սահմաններից ցածր այնքանով, որքանով դա իրականապես հնարավոր է, հաշվի առնելով բոլոր տնտեսական և սոցիալական գործոնները, ինչպես նաև սահմանափակել և մեղմացնել ազդեցությունն անձնակազմի, բնակչության և շրջակա միջավայրի վրա վթարների դեպքում:

Տվյալ նպատակի իրականացումը հնարավոր է միայն հետևյալ հիմնական սկզբունքների կիրառման դեպքում.

-ապահովել ՀՀ օրենսդրության, ճառագայթումային անվտանգության բնագավառում գործող կանոնների և նորմերի պահանջների անշեղ կատարում,

-կանխել նորմալ շահագործման խախտումները, միջուկային և ճառագայթումային վթարները, որոնք բնակչության և շրջակա միջավայրի համար ճառագայթումային վտանգի հիմնական աղբյուրներից մեկն են հանդիսանում,

-նորմալ շահագործման պայմաններում և նորմալ շահագործման խախտումների, այդ թվում՝ վթարների դեպքում սահմանափակել ճառագայթումային ազդեցությունն անձնակազմի, բնակչության և շրջակա միջավայրի վրա հաստատված սահմաններից ցածր արժեքներով,

-երաշխավորել “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի անձնակազմի իրավունքները ՀԱԷԿ-ում իրենց աշխատանքային գործունեության ընթացքում իոնացնող ճառագայթման աղբյուրների ազդեցությունից պաշտպանվելու նկատմամբ, որոնք իրականացվում են ստորև նշված պայմաններն ապահովելու միջոցով.

- իոնացնող ճառագայթման գոտում աշխատող “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի անձնակազմի ստացած ճառագայթահարման անհատական բաժնաչափերի հաշվառում և վերահսկում,
- մասնագիտական ճառագայթահարման հետ կապված աշխատանքների կառավարում՝ ըստ ALARA սկզբունքների (իոնացնող ճառագայթահարման աղբյուրների հետ աշխատելու ընթացքում անձնակազմի ճառագայթահարման նվազեցում),
- “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի անձնակազմի՝ ճառագայթահարման անհատական բաժնաչափի վերաբերյալ տեղեկատվությունից օգտվելու հնարավորությունը,

- ձեռնարկության աշխատավայրերում, շինություններում, տարածքներում, սանիտարապահպանական գոտում և հսկման գոտում ճառագայթումային իրադրության, ինչպես նաև ճառագայթակտիվ նյութերի արտանետումների և ջրանետումների բազմակողմանի և կանոնավոր վերահսկման իրականացում,
- ճառագայթումային անվտանգության համար սպառնալիք առաջացնող վթարային իրավիճակների, տեխնոլոգիական կանոնակարգի խախտումների մասին պետական մարմիններին ժամանակին տեղեկացնելը:
“ՀԱԷԿ” ՓԲԸ-ի ղեկավարությունը սիստեմատիկ կերպով կիրականացնի ՀԱԷԿ-ի ճառագայթումային անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և հատուկ ուշադրություն կհատկացնի “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի աշխատակիցների, ինչպես նաև կողմնակի կազմակերպությունների՝ ճառագայթումային պաշտպանության բարձրացմանը միտված բոլոր նախաձեռնություններին և կսատարի դրանք: